

**ԿԱՐԻՆԵ ՄԱԴԱԹՅԱՆ
ԱՆՆԱ ԱՆՏՈՆՅԱՆ****ՏԱՌԱՃԱՆԱԶՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՄՆ-Ի ՏԱՐՐԱԿԱՆ
ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ**

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v2i69.187

ԱՄՓՈՓՈՒՄ

Գրաճանաչության իրականացումը հանրակրթության հիմնաքարն է: Այն աշակերտի համար ապահովում է հետագա ուսումնառության բարենպաստ պայմաններ: Ինչպես ՀՀ-ում, այնպես էլ Սփյուռքում հայկական դպրոցների տարրական դասարաններում մայրենիի դասերի գերխնդիրը կարդալու բոլոր որակական հատկանիշների պահպանմամբ ընթերցելու կարողության զարգացումն է: Որքան էլ որ հայերենի գրաճանաչության մեթոդը հնչյունային է, այնուամենայնիվ տարբեր տարածաշրջաններում այդ գործընթացում առկա են որոշակի առանձնահատկություններ: Այսպես, ԱՄՆ-ում գրաճանաչության գործընթացի առանձնահատկությունները պայմանավորված են երկրի թիրախային լեզվով՝ անգլերենով: Հայ իրականության մեջ գրաճանաչությունն իրականացվում է վերլուծական-համադրական հնչյունաբառային մեթոդով՝ որպես հիմնակետ ընդունելով հնչյունի ընկալումը: ԱՄՆ-ում հայ երեխաներն անգլերեն սովորում են ոչ հնչյունային մեթոդով, իսկ հայերենով գրաճանաչ են դառնում հնչյունային մեթոդով: Պատմականորեն հաստատված է, որ հայերեն կարդալու կարողության զարգացման ամենամատչելի մեթոդն է, քանի որ մեր այբուբենը հնչյունային է. յուրաքանչյուր հնչյուն ունի իր տառը: Աշակերտներն առանց դժվարության են յուրացնում կարդալու, հնչյունը լսելու, արտասանելու և այլ կարողությունները: Սփյուռքում հայ երեխաների գրաճանաչության համար օգտագործվող այբբենարաններից է «Զանգակ» այբբենարանը՝ Զ. Գյուլամիրյանի

հեղինակությամբ, համապատասխան աշխատանքային տեսությունով և մեթոդական ուղեցույցով:

Քանալի բառեր և արտահայտություններ. վերլուծական-համադրական հնչյունաբառային մեթոդներ, հնչյուն, հնչյունավանկային մեթոդ, հնչյունային լսողություն, կարդալու որակական հատկանիշներ, գլոբալ մեթոդ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գրաճանաչության ուսուցման արդյունավետ մեթոդների փնտրտուքը հայոց աշխարհում անցել է բավականին երկար ճանապարհ՝ առաջնային համարելով հայոց առանձնահատկություններն ու մանկավարժության պահանջները: Հայերենի լեզվական առանձնահատկություններով պայմանավորված՝ մշակվել են գրաճանաչության լավագույն հնարներ և եղանակներ: Պատմական տարբեր ժամանակաշրջաններում հայոց դպրոցներում սովորողների գրաճանաչ դարձնելու մեթոդները դարերով փոփոխության են ենթարկվել. սակայն բոլորի հիմքում էլ ընկած է եղել հնչյունային մեթոդը, որն այսօր էլ առավել մշակված կիրառվում է հայկական բոլոր այբբենարաններում և առաջին դասարաններում: Մեր հոգվածի թեմայի արդիականությունը պայմանավորված է մայրենի լեզվի հանրամատչելի ուղիների փնտրտուքով՝ հաշվի առնելով նաև միջազգային փորձում առկա մոտեցումները: Մեր նպատակն է ներկայացնել Հայաստանի Հանրապետության տարրական դասարաններում հայերենի, իսկ ԱՄՆ-ում՝ անգլերենի գրաճանաչության մեթոդների առանձնահատկությունները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Գրաճանաչության մեթոդների մեր կիրառած մեթոդներն ապահովում են ուսումնասիրության արդյունքների հիմնավորվածությունը և արդյունավետությունը՝ ինչպես Հայաստանի, այնպես էլ ԱՄՆ-ի կրթական համակարգերում:

1. Վերլուծական մեթոդ

Իրականացրել ենք տեքստերի վերլուծություններ՝ ըստ համապատասխան մանկավարժական և մեթոդական հայեցակարգերի: Վերլուծել ենք հայերեն և

անգլերեն լեզուներով գրաճանաչության կազմակերպման մեթոդները՝ ուսումնասիրելով դրանց պատմական զարգացումն ու կիրառությունը, մասնագիտական գրականության դիտարկման ճանապարհով ներկայացրել ենք գրաճանաչման մեթոդների պատմական զարգացումն ընթացքը:

2. Պատմահամեմատական մեթոդ

Համեմատվել են Հայաստանի և ԱՄՆ-ի գրաճանաչության ուսուցման մեթոդները՝ հիմք ընդունելով լեզվաբանական տարբերությունները և ուսումնառության մոտեցումներն այս երկու երկրներում: Հետազոտվել է գրաճանաչության պատմական զարգացումը՝ Մեսրոպ Մաշտոցից մինչև Խաչատուր Աբովյան և Խորհրդային միություն ժամանակաշրջանները:

3. Փաստագրական մեթոդ

Հոդվածում քննարկվող գրաճանաչության մեթոդների դիտարկումն իրակացրել ենք գիտական աղբյուրների և ուսումնասիրությունների հիման վրա, որոնք փաստագրում են գրաճանաչության տեսական հիմքերը և գործնական կիրառությունը:

4. Նկարագրական մեթոդ

Դիտարկվել են ինչպես Հայաստանի, այնպես էլ ԱՄՆ-ի դպրոցներում կիրառվող գրաճանաչության գործընթացներն ու մեթոդական առանձնահատկությունները: Ներկայացրել ենք նաև գրաճանաչության մեթոդների տրամաբանական բացատրությունները՝ հիմք ընդունելով լեզվաբանական և մանկավարժության հոգեբանաբանական սկզբունքները:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ընդհանուր առմամբ, ըստ գերմանացի մանկավարժ Քեռի՝ առանձնացվում են գրաճանաչության մեթոդների 3 խումբ՝ համադրական, վերլուծական և վերլուծա-համադրական: Վերջին խմբի մեթոդները մեր հետազոտության հիմնական օբյեկտն են, քանի որ ՀՀ-ում գրաճանաչության իրականացման հիմնական սկզբունքները հիմնված են հենց դրանց վրա: Վերլուծա-համադրական խմբի մեթոդների կիրառման դեպքում գրաճանաչությունն իրականացվում է՝

ամբողջական բառերը վերլուծելով վանկերի, վանկերը՝ հնչյունների, հետո համադրությամբ հնչյուններից կազմելով վանկեր և վանկերից բառեր՝ հակադարձ քայլաշարով:

Հայերենն ունի 36 հնչույթ և 40 տառ (ներառյալ նաև այժմ այբուբենում վերականգնված Ի,ւ տառը): Մեսրոպյան այբուբենն ուներ 36 տառ: Տարբեր ժամանակներում այբուբեն են մուտք գործել օ, ֆ, ու, և տառերը, և 1922 թ. դուրս էր բերվել Ի,ւ տառը: Սփյուռքում ընդունված ավանդական ուղղագրության մեջ այդ տառը պահպանվել է: Ժամանակակից հայերենի այբուբենը ներկայացնում է որոշակի գրային համակարգ: Հայերենի յուրաքանչյուր հնչույթ ունի իր համապատասխան տառը: Որոշ տառեր նշանակում են երկու կամ երեք հնչյուն: Տառերն ունեն իրենց անվանումները և թվային արժեքը (**Սուքիասյան Ա., 2017**):

Գրաճանաչության փնտրտուքների հիմնական փուլը հայոց աշխարհում սկսվել է դեռևս 405 թվականին մաշտոցյան գրերի գյուտով: Աշակերտակենտրոն մեթոդով դասավանդման հիմքը դրեց Խաչատուր Աբովյանը «Նախաշավիղ» այբբենարան-ընթերցարանով՝ հակադրվելով տառանունների ուսուցմամբ առաջնորդվող բարդ «Տեր Թողիկի դպրոց»-ին: Խ. Աբովյանն առաջարկում էր կարդալն ու գրելը սկսել միասին, կարդացածը պատմել սովորեցնել, խրախուսել արտահայտիչ ընթերցանությունը, ուշադրություն դարձնել սովորողների ծայնին, կապել տառը հնչյունի հետ (**Ղարիբյան Ա., 1950**):

Հաջորդ փուլն աչքի ընկավ Ղազարոս Աղայանի ջանքերով: Նա գրաճանաչության գործընթացում կարևորում էր աշակերտի էությունը, նրա մտավոր, բարոյական և ֆիզիկական կարողությունների զարգացման հնարավորությունները: Ղ. Աղայանը կարևորում էր աշակերտների բանավոր խոսքի նախնական հմտությունների զարգացումը, առաջարկվում էր նախադասությունը բառերի վերլուծել և բառերը միացնելով՝ նախադասություններ կարդալ: Ղ. Աղայանի մեթոդի հիման վրա գրաճանաչությունը կազմակերպվում էր՝ նկատի ունենալով, որ բառը բաղկացած է հնչյուններից, որոնք բառում ունեն

որոշակի դասավորություն: Աշակերտը նախ պիտի ճանաչեր հնչյունի գրաֆիկական պատկերը, որպեսզի կարողանա կարդալ: Աշակերտները սովորում էին բառերը վերլուծել վանկերի և հնչյունների՝ անհրաժեշտ բառը գրելու համար, քանի որ թե՛ գրելը, թե՛ կարդալը վերլուծա-համադրական գործընթացներ են: Այս մեթոդը պահանջում էր 3 տիպի հաջորդական աշխատանք՝ նախապատրաստություն, գրաճանաչություն, կարդալու տեխնիկայի մշակում (**Ղարիբյան Ա., 1947**):

Հնչյունային մեթոդը շարունակեցին ուսումնասիրել և այդ մեթոդով այբբենարաններ ստեղծել Ա.Վ. Ճյուղուրյանը, Մ. Գասպարյանը, Ա. Տեր-Գրիգորյանը, Զ. Գյուլամիրյանը, Ա. Քյուրքյանն ու Լ. Տեր-Գրիգորյանը, Վ. Սարգսյանը:

1988թ. կրթության ոլորտում սկզբնավորվեցին արմատական փոփոխություններ, որոնք առավել ընդհանրական բնույթ ստացան Խորհրդային Միության փլուզումից հետո: Առաջադրվեցին հասարակական, քաղաքական, սոցիալական նոր խնդիրներ: Ի վերջո, ընդհանրացվեցին վերլուծական-համադրական հնչյունավանկային և հնչյունաբառային մեթոդները: Հնչյունավանկային մեթոդով կարևորվում է բառի հնչյունային վերլուծությունը և կարդալու նվազագույն միավոր է դիտարկվում վանկը, այսինքն՝ աշակերտը կարդալ սովորում է վանկերով: Երբ աշակերտները ձեռք են բերում տառերը համադրելու կարողությունը, նրանք կարդում են բառերով: Հնչյունաբառային մեթոդի հիմնական առանձնահատկությունն այն է, որ կարդալու ամենափոքր միավորը բառն է՝ չթխտելով վանկատման հնարավորությունը: Այս մեթոդի պարագայում առաջարկվում են միավանկ բառեր, ապա այդ բառերը «աճեցվում են», օրինակ՝ շուն-աշուն, նուշ-անուշ-Անուշիկ և այլն: Այս երկու մեթոդների շնորհիվ աշակերտները ծանոթանում են հայերենի հիմնական հնչյուններին, սովորում դրանք լսել, առանձնացնել խոսքում, նշել դրանք տառերով, ըստ հաջորդականության վերլուծել բառերի հնչյունակազմը (**Գյուլամիրյան Զ., 2018**):

Անգլերենը աչքի է ընկնում տառերի և հնչյունների թվաքանակների տարբերությամբ: Անգլերենը, ընդհանուր առմամբ, ունի 44 հնչյուն՝ 24 բաղաձայն, 2 կիսահնչյուն և 18-20 ձայնավոր: 44 հնչյունների արտահայտման համար օգտագործվում է 26 գրավոր տառ: Նույնիսկ բրիտանական և ամերիկյան տարբերակների մեջ կարող են տարակարծություններ նկատվել՝ ըստ հնչյունների դասակարգման ձայնավորների թիվը կարող է փոփոխվել: Արտասանության, երկհնչյունների և դասակարգման տարբերություններով բրիտանական տարբերակում ընդունելի է 20 ձայնավոր, ամերիկյանում 15-ից 19 (**Bizzochi A., 2017**):

Ամերիկյան կրթական համակարգում տառաճանաչության դասավանդման մեթոդներն աչքի են ընկնում հետաքրքրական լուծումներով: Մենք շեշտադրումը կդնենք համակարգված հնչյունային ուսուցման (systematic phonics instruction) և «ընթերցանության գիտություն» (science of reading) գիտական համապարփակ հետազոտական ուսուցման վրա, քանի որ ըստ մեզ այս 2 մոտեցումների միասնական օգտագործումն է հարաբերականորեն ներկայացնում տառաճանաչության գիտականորեն ամենաարդյունավետ մոտեցումը ԱՄՆ-ում, ինչպես նաև հետաքրքիր տեսլական առաջարկում մեզ համար: Տառաճանաչությունը կազմակերպվում է զարգացնելով աշակերտների հնչյունային ընկալումը՝ կարողությունը առանձնացնելու և շահարկելու խոսքային լեզվի առանձին հնչյունները, նախքան գրավոր ձևով այդ հնչյունները ներկայացնող տեսողական նշանները ներմուծելը: **Այս փուլային հաջորդականությունը արտացոլում է գրագիտության զարգացման ժամանակակից ըմբռնումը**, ըստ որի՝ ընթերցանությունը մարդու բնածին ունակություն չէ, այլ բարդ ճանաչողական հմտություն, որը պետք է որոշակի մեթոդով ձևավորվի: Համակարգված հնչյունային ուսուցումը սկսնակ ընթերցողների համար ապահովում է ավելի բարձր արդյունքներ՝ համեմատած այլ մոտեցումների հետ: Ուսուցումը, որն ընդգծում է տառերի և հնչյունների միջև կապը՝ հետևելով պարզից բարդ հնչյունային օրինաչափությունների

տրամաբանական հաջորդականությանը, օգնում է աշակերտներին զարգացնել վերձանման հմտությունները, որոնք կարևոր են սահուն ընթերցանության համար: ԱՄՆ-ում այբուբենի ուսուցման ժամանակ ուսուցումը կենտրոնանում է բառի ճիշտ արտասանության վրա ըստ դրա դիրքի: Օրինակ՝ *c* տառը սովերելիս աշակերտներին սովորեցնում են, որ այն կարող է հնչել որպես /k/ (“cat”) կամ /s/ (“city”)՝ կախված այն դիրքից և հետևող տառերից: Սկսվում է առավել հաճախ օգտագործվող բաղաձայններից և կարճ ձայնավորներից, իսկ հետո անցում կատարվում է ավելի բարդ հնչյունային օրինաչափությունների, ինչպիսիք են բաղաձայնների համադրությունները, երկհնչյունները և ձայնավորների խմբերը: Ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու համար ուսուցիչները կիրառում են բազմազգայական՝ (կինեստետիկ գործողություններ, տակտիլ հպումներ, լսողական միջոցներ), որոնք միաժամանակ ակտիվացնում են սովորողի ուղեղի բազմաթիվ նյարդային ուղիներ: Ժամանակակից տարրական դասարաններում կիրառվում են նաև տեղեկատվական տեխնոլոգիաները՝ ավանդական ուսուցումը լրացնելու, ոչ թե դասագրքին փոխարինելու համար: **(National Reading Panel, 2000)** Մյուս կողմից՝ զուգընթաց կիրառվում է նաև «ընթերցանության նոր մեթոդիկա», որը կարդալու կարողության յուրացման գիտական հիմունքներով հաստատված հասկացողություն է: Սրա առանցքը **համակարգված հնչյունային ուսուցումն է՝** խոսակցական հնչյունների և դրանց գրավոր ներկայացումների (գրույթներ) միջև կապի դասավանդման կառուցվածքային մոտեցումը: «Ընթերցանության գիտություն» խառնուրդ է ճանաչողական հոգեբանության, լեզվաբանության, նյարդաբանության: Այն հիմնված է հնչյունային տարբերակման, հնչյունագրության, բառերի ավտոմատ ճանաչման, բառապաշարի, վերձանված բառերի իմաստների քննարկման վրա և դասավանդվում է դրանց զուգահեռ: «Ընթերցանության գիտությունը» մեկուսացված չէ, ընդհակառակը՝ ընթանում է համակարգային հնչյունային ուսուցմանը զուգահեռ տառաճանաչության ավելի խորքային և արդյունավետ ուսուցման համար **(Reading League, 2021):**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քննարկվող երկու լեզուներում էլ կիրառվում են միևնույն հնչյունային մեթոդները՝ հնչյունն որպես հիմք: Տարբերությունը նշմարվում է հայերենի և անգլերենի հնչյունների միջև. անգլերենն աչքի է ընկնում տառերի ու հնչյունների մեծ տարբերությամբ, հայերենում դա առկա չէ: Այս էական տարբերությունը հստակ արձանագրվում է գրաճանաչության գործընթացում: Հայերենում գրաճանաչությունը կենտրոնանում է հնչյունի ընկալման վրա՝ հստակեցվում է հնչյունը և յուրացվում դրա հստակ, կանխատեսելի արտասանությունը բառում: Ուսուցումը կազմակերպվում է վերլուծական-համադրական հնչյունավանկային կամ հնչյունաբառային մեթոդներով՝ միասնաբար: Անգլերենը, կենտրոնանում է հնչյունի ուսուցման վրա՝ դրա արտասանման հնարավոր տարբերակներով: Նույն հնչյունը կարող է տարբեր արտասանություններ ունենալ բառում տարբեր դիրքերում, երբեմն՝ նույնիսկ չարտասանվել: Արդյունավետության համար անգլերենը համակարգային հնչյունային ուսուցմանը զուգընթաց կիրառում է «ընթերցանության գիտությունը» համապարփակ գիտական հետազոտության սկզբունքները: Երկու լեզուներն էլ չեն կազմակերպում ուսուցումը տառանունների շուրջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Գյուլամիրյան Զ. (2018)**, Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Երևան, «Զանգակ» հրատ.:
2. **Ղարիբյան Ա. (1950)**, Հայոց լեզվի մեթոդիկա, Հայպետհրատ.:
3. **Սուքիասյան Ա., Սուքիասյան Ք., Ֆելեքյան Մ. (2017)**, Ժամանակակից Հայոց լեզու (հնչյունաբանություն, բառագիտություն), Երևան, ԵՊՀ հրատ.:
4. **Bizzochi A. (2017)**, How Many Phonemes Does the English Language have, *International Journal on Studies in English Language and Literature*, Vol. 5, Issue 10, Pages 36–46.

5. **National Reading Panel. (2000)**, Teaching Children to Read: An Evidence-Based Assessment of the Scientific Research Literature on Reading and Its Implications for Reading Instruction. National Institute of Child Health and Human Development.
<https://www.nichd.nih.gov/sites/default/files/publications/pubs/nrp/documents/report.pdf>
6. **The Reading League. (2021)**, Science of Reading: A Defining Movement.
https://www.thereadingleague.org/wp-content/uploads/2022/01/Science_of_Reading_Defining_Guide_eBook.pdf

REFERENCES

1. **Gyulamiryan J. (2018)**, Mayrenii ousowcman met'odika / Methodology of teaching native language /, Yerevan, "Zangak" publishing house.
2. **Gharibyan A. (1947)**, Hayoc lezvi met'odika /Methodology of Armenian Language/, Haypethrat.
3. **Sukhiasyan A.M., Sukhiasyan K.A., Felekyan M.H. (2017)**, Jhamanakakic Hayoc lezow (hnychownabanowt'yown, bar'agitowt'yown /Modern Armenian Language (Phonetics, Lexicology)/, Yerevan, Yerevan State University Publishing House.
4. **Bizzochi A. (2017)**, How Many Phonemes Does the English Language have, *International Journal on Studies in English Language and Literature*, Vol. 5, Issue 10, Pages 36–46.
5. **National Reading Panel. (2000)**, Teaching Children to Read: An Evidence-Based Assessment of the Scientific Research Literature on Reading and Its Implications for Reading Instruction. National Institute of Child Health and Human Development.
<https://www.nichd.nih.gov/sites/default/files/publications/pubs/nrp/documents/report.pdf>
6. **The Reading League. (2021)**, Science of Reading: A Defining Movement.

https://www.thereadingleague.org/wp-content/uploads/2022/01/Science_of_Reading_Defining_Guide_eBook.pdf

Karine Madatyan, Anna Antonyan

Literacy Instruction in Primary Classrooms of Armenia and the USA

Conclusion

Key words and expressions: *analytical-comparative methods, phoneme, phoneme-syllabic, phoneme-word level, systematic phonics instruction, reading science, literacy (letter recognition).*

The article touches upon the methodological revelations of literacy instruction comparison between Armenian and USA. We see clear phoneme-based instruction in both cases depending on the phonetic peculiarities of Armenian and English. To make the methodological choice of the opted methods more persuasive and well-grounded, we take a serious notice of the phonological peculiarities of both languages. Both Armenian and English come forward with their unique and inherent set of phonemes each possessing distinct numbers of phonemes, pronunciation rules, phonetic patterns, and phonological processes that shape their respective linguistic identities. Armenia has opted for analytic-synthetic methods using syllabic and lexical approaches. While US has advocated for more research backed systematic phonics instruction and science of reading. While systematic phonics instruction insures phoneme introduction, science of reading applies to efficiency of reading. These approaches for both languages reflect a shared commitment to foster literacy through didactic student-centered. It is important to point out that modern methodology is evolving and from pedagogical perspective that gives us a chance to be more flexible with methods to ensure maximum efficiency.

Карине Мадатян, Анна Антонян

Обучение грамоте в начальных классах Армении и США

Заключение

Ключевые слова и выражения: *аналитико-сопоставительные методы, фонема, звука-слоговой, звука-словесный, системное звуковое обучение, наука о чтении, обучение грамоте.*

Статья затрагивает методологические аспекты сравнения обучения грамоте между Арменией и США. Мы наблюдаем четкое фонемное обучение в обоих случаях, которое зависит от фонетических особенностей армянского и английского языков. Для того чтобы методологический выбор использованных методов был более убедительным и обоснованным, мы уделяем серьезное внимание фонологическим особенностям обоих языков. Как армянский, так и английский языки обладают своим уникальным и присущим им набором фонем, каждая из которых имеет различное количество звуков, правила произношения, фонетические модели и фонологические процессы, формирующие их языковую идентичность. В Армении используется аналитико-синтетический метод с применением слогового и лексического подходов. В США, напротив, применяется систематическое фонетическое обучение, основанное на исследованиях, и наука о чтении. Систематическое фонетическое обучение гарантирует введение фонем, а наука о чтении ориентирована на эффективность процесса чтения. Обе методики отражают общую приверженность развитию грамотности через дидактическое обучение, ориентированное на ученика. Важно отметить, что современная методология развивается, что с педагогической точки зрения предоставляет возможность гибко применять методы для достижения максимальной эффективности.

Կարինե Մադաթյան - Արարատի մարզի Այգեգարդ գյուղի Արարատ Ղարիբյանի անվան միջնակարգ դպրոցի դասվար: Տպագրել է 2 հոդված: karine.madatyan2017@mail.ru

Աննա Անտոնյան – Տավուշի մարզի Նոյեմբերյան քաղաքի թիվ 2 հիմնական դպրոցի դասվար: Տպագրել է 2 հոդված: anna.antonyan.84@mail.ru -

Karine Madatyan - Teacher of Ararat Gharibyan Secondary School in Aygezard village, Ararat region. Authored 2 articles.

Anna Antonyan - Primary school teacher at No. 2 Basic School of Noyemberyan, Tavush Region, Authored 2 articles anna.antonyan.84@mail.ru, karine.madatyan2017@mail.ru

Карине Мадатян - Учитель средней школы имени Арарата Гарибяна в селе Айгезард Араратского региона. Опубликовано 2 статьи, +37477103901, karine.madatyan2017@mail.ru

Анна Антонян - Учитель начальных классов основной школы №2 в Ноемберяне, Тавушская область. Опубликовано 2 статьи. anna.antonyan.84@mail.ru

Խմբագրություն է ուղարկվել 30.04.2025թ.

Հանձնարարվել է գրախոսության 27.05.2025թ.

Հրապարակման է ներկայացվել 10.09.2025թ

«Հայագիտական հանդես» ամսագրի խմբագրությունը չեղդություն է դրսևորում հոդվածներում արտահայտած կարծիքների ու տեսակետների նկատմամբ: